



Բյուզանդական Կայսրության և Սասանյան Պարսկաստանի Հայաթափման և Ձուլման Զաղաքականությունը IV-VII դարերում



ՅԱՅԱՍՏԱՆԸ 387 թվականին բաժանվեց Սասանյան Պարսկաստանի և Բյուզանդական կայսրության միջև: Այս երկու պետությունները երկիրն ամբողջովին վերահսկելի դարձնելու համար ձեռնամուխ եղան մի շարք քայլերի, որոնց վերջնական նպատակն էր հայ ազգի ձուլումը: Նման քայլեր էին.

Ա . Հայաստանը կազմակերպող և առաջնորդող ուժերի՝ թագավորական իշխանության և նախարարական համակարգի ոչնչացումը:

Հայկական Արշակունյաց թագավորական իշխանությունը 428 թվականին վերացնելուց հետո, հերթը հասավ նախարարական համակարգի քայքայմանը, որն առավել հետետողական կերպով իրականացվեց հատկապես բյուզանդական Հայաստանում:

6-րդ դարի բյուզանդական կայսր Հուստինիանոս 1-ը մի շարք հրովարտակներով վերափոխեց հայ նախարարական տների ժառանգական իրավունքը: Արդյունքում, եթե նախկինում հիմնական կալվածքն անցնում էր բացառապես հորից ավագ որդուն, ապա այժմ այն պետք է բաժանվեր նախարարի բոլոր, այդ թվում նաև իգական սեռի զավակների միջև: Այս փոփոխությունը հանգեցրեց նախարարական կալվածքների տրոհմանն ու, ի վերջո, նախարարական համակարգի ոչնչացմանը:

Հուստինիանոսին հաջորդած կայսրերից Մորիկն (582-602) իր նպատակը դարձրեց ուղղակիորեն պարպել Հայաստանը զինվորական տարրից՝ ձեռնարկելով իր տիրապետության տակ գտնվող հայ ազնվականությանը, նրանց՝ զորքերի և ընտանիքների հետ կայսրության արեւմտյան ծայրամասային գավառներ՝ Թրակիա և Մակեդոնիա վերաբնակեցնելու գործը: Ավելին, նա նույնիսկ առաջարկեց պարսկական Խոսրով Փարվեզ թագավորին նմանա-

տիպ քայլեր ձեռնարկել նաև Հայաստանի պարսկական մասում և գաղթեցնել հայ նախարարներին Պարսկաստանի արեւելյան ծայրամասեր: Մորիկը հետեւյալ կերպ էր պատճառաբանում իր այդ միտքը. **«Ազգ մի խոտոր և անհանգանդ են (հայերը), կան ի միջի մերում և պղտորեն: Բայց եկ, ես զիմս ժողովեմ և ի Թրակե գումարեմ. և դու զքոյդ ժողովե և հրամայե յԱրեւելս տանել: Չի եթե մեռանին՝ թշնամիք մեռանին, և եթե սպանանեն՝ զթշնամիս սպանանեն»:**

1

Այդ քաղաքականության արդյունքում, արդեն 6-րդ դարի վերջերին, հոծ հայկական գաղութներ առաջացան Բալկանյան թերակղզում և Բյուզանդիայի այլ հատվածներում:

Բ . Հայ ազգի մշակութային և կրոնական ձուլումը:

Սասանյան Իրանն ու Բյուզանդական կայսրությունը ձեռնամուխ եղան նաև հայերին սեփական կրոնական ու մշակութային ինքնությունից զրկելու և իրենց պետական կրոնի ու մշակույթի պարտադրման քաղաքականության իրականացմանը: Նպատակը նույնն էր՝ հայ բնակչության ձուլում:

Այդ քաղաքականությունը կատարյալ անհաջողության մատնվեց Հայաստանի՝ Սասանյան Իրանին պատկանող հատվածում, բայց մեծ չափով հաջողվեց Բյուզանդական կայսրությունում, ուր հայերին պարտադրվեց քաղկեդոնականություն:

Բյուզանդական քաղաքականության արդյունքում 5-7-րդ դարերի ընթացքում ամբողջովին հունականացվեց Փոքր Հայքի հայ բնակչությունը, իսկ բյուզանդական Մեծ Հայքի հայ բնակչությանը վերջնական հունականացումից փրկեցին միայն արաբական արշավանքները: